ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2016 ԹՎԱ-
ԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 18-Ի N 6 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ 15-ՐԴ ԿԵՏՈՎ
ՀԱՎԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԺԱՆԱՑԱԾ ԱՐՁԱՆԱԳՐԱՅԻՆ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի փետրվարի 18-ի N 6 արձանագրության 15-րդ կետով հավանության արժանացած «Պետական ֆինանսների կառավարման համակարգի բարեփոխումների վերանայված ռազմավարությանը, պետական ֆինանսների կառավարման ոլորտում առկա խնդիրներին և դրանց լուծմանն ուղղված միջոցառումներին ու պետական ֆինանսների կառավարման համակարգի բարեփոխումների 2016-2020 թվականներին իրականացվելիք գործողությունների ծրագրին հավանություն տալու մասին» արձանագրային որոշման մեջ կատարել հետևյալ լրացումը և փոփոխությունները՝

1) որոշման N 1 հավելվածի՝

ա. հապավումների ցանկը «ՄԺԾԾ - Միջնաժամկետ ծախսերի ծրագիր» բառերից հետո լրացնել «ՀՀ ԿԱ ՊԵԿ - Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե» բառերով,

բ. 15-րդ, 16-րդ, 20-րդ կետերում և 17-րդ կետի 1-ին ենթակետում «2015» թիվը փոխարինել «2016» թվով,

գ. 16-րդ կետի 4-րդ ծանոթագրությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Տես՝ http://www.pefa.org/en/content/introducing-pefa-2016 հղումը»,

դ. 16-րդ կետում բյուջետային ցիկլը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«



»,

ե. 20-րդ կետի 1-ին աղյուսակը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Աղյուսակ 1. ՊԾՖՀ-ի 2016 թվականի կատարողականի ցուցանիշների բաղադրիչները

Հենասյուները	ՊԾՖՀ-ի կատարողականի ցուցանիշը	Ցուցանիշի անվանումը
1	2	3
I. Բյուջեի հուսալիությունը	ԿՑ-1	Ագրեգացված ծախսերի արդյունքները
	ԿՑ-2	Ծախսերի արդյունքների կազմը
	ԿՑ-3	Եկամուտների արդյունքները
II. Հանրային ֆինանսների թափանցիկությունը	ԿՑ-4	Բյուջեի դասակարգում
	ԿՑ-5	Բյուջետային փաստաթղթավորում
	ԿՑ-6	Ֆինանսական հաշվետվություն-ներում չներառված կենտրոնական կառավարության գործառնությունները
	ԿՑ-7	Միջկառավարական փոխանցումներ

1	2	3
	ԿՑ-8	Ծառայությունների մատուցման կատարողականի մասին տեղեկատվություն
	ԿՑ-9	Հանրային տեղեկատվության մատչելիությունը
III. Ակտիվների և պարտավորությունների կառավարում	ԿՑ-10	Հարկաբյուջետային ռիսկերի հաշվետվողականությունը
	ԿՑ-11	Հանրային ներդրումների կառավարում
	ԿՑ-12	Հանրային ակտիվների կառավարում
	ԿՑ-13	Պարտքի կառավարում
IV. Քաղաքականության վրա հիմնված հարկաբյուջետային ռազմավարություն և բյուջետավորում	ԿՑ-14	Մակրոտնտեսական և հարկաբյուջետային կանխատեսումներ
	ԿՑ-15	Հարկաբյուջետային ռազմավարություն
	ԿՑ-16	Միջնաժամկետ հեռանկարը ծախսերի բյուջետավորման մեջ
	ԿՑ-17	Բյուջեի պատրաստման գործընթացը
	ԿՑ-18	Բյուջեների օրենսդրական ուսումնասիրություն
V. Կանխատեսելիությունը և հսկողությունը բյուջեի կատարման գործընթացում	ԿՑ-19	Եկամուտների վարչարարություն
	ԿՑ-20	Եկամուտների հաշվառում
	ԿՑ-21	Տարվա ռեսուրսների բաշխման կանխատեսելիությունը
	ԿՑ-22	Ծախսերի ապառքներ
	ԿՑ-23	Աշխատավարձերի հսկողություն
	ԿՑ-24	Գնումների կառավարում
	ԿՑ-25	Ոչ աշխատավարձային ծախսերի ներքին հսկողությունը
	ԿՑ-26	Ներքին աուդիտ
VI. Հաշվապահական հաշվառում և հաշվետվություն	ԿՑ-27	Ֆինանսական տվյալների ամբողջականություն
	ԿՑ-28	Տարեկան բյուջետային հաշվետվություններ
	ԿՑ-29	Տարեկան ֆինանսական հաշվետվություններ
VII. Արտաքին վերահսկողություն և աուդիտ	ԿՑ-30	Արտաքին աուդիտ
	ԿՑ-31	Աուդիտի հաշվետվությունների օրենսդրական ուսումնասիրություն

».

2) որոշման N 2 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն N 1 հավելվածի.

3) որոշման N 3 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն N 2 հավելվածի: